ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/135/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 02 հունիս 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Լիլիթ Ալեքսանյանի, Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հունիսի 2-ին քննելով Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի պետի տեղակալ Մամիկոն Լևոնի Մքոյանի կողմից՝ 2023 թվականի գույքի, եկամուտների ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/135/2025 վարչական գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով Շուշան Մքոյանի վերաբերյալ

իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ Մամիկոն Լևոնի Մքոյանի գույքային դրությունը, այդ թվում՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացնելով հայտարարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1. Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2000 թվականից Մամիկոն Մքոյանին ընդհանուր, համատեղ սեփականության իրավունքով պատկանում են Շիրակի մարզ, Արևիկ գյուղում (համայնքում) գտնվող տնամերձ հողամասը և հացատունը (170 քմ, 40.5 քմ, 17.2 քմ), իսկ 2003 թվականից՝ Շիրակի մարզ, Արևիկ գյուղում (համայնքում) գտնվող հողամասը (3600 քմ), որոնք ներկայացված չեն եղել պաշտոնատար անձի՝ ընտանիքի անդամի 2023 թվականի Հայտարարագրում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 5-ին Մամիկոն Մքոյանին է հասցեագրել թիվ 01/1837-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 16:00-ին, Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:30-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Մամիկոն Մքոյանը ստացել է 2025 թվականի մայիսի 22-ին (հիմք՝ AL 0127782520AM անդորրագիրը): Հանձնաժողովին հասցեագրված դիմումում նշված է, որ գրությունը ստացվել է 2025 թվականի մայիսի 23-ին:

1.3 2025 թվականի մայիսի 29-ին պատշաճ ծանուցված Մամիկոն Մքոյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 96/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մամիկոն Մքոյանի բացակայությամբ 2025 թվականի հունիսի

2-ին, ժամը՝ 15:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Մամիկոն Մքոյանը 2025 թվականի մայիսի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիմում, որով հայտնել է հետևյալը. «(...) Սույն դիմումով հայտնում եմ, որ Ձեր կողմից 05.05.2025 թվականի 01/1837-2025 գրությունը, որին ես պատշաճ ծանուցվել եմ 23.05.2025 թվականին, ցանկանում եմ նշել, որ Շիրակի մարզի Արևիկ համայնքում գտնվող տնամերձ հողամասը, հացատունը և 3600քմ հողամասը իմ 2023 թվականի հայտարարագրում չեմ նշել զուտ տեխնիկական վրիպակի հետևանքով:

Ես որևէ գույք թաքցնելու դիտավորություն չեմ ունեցել, բացի այդ ձեռքբերման տարեթվերից արդեն իսկ պարզ է, որ այն հայտարարագիր լրացնելուց շատ վաղ եմ ձեռք բերել»:

Կից ներկայացվել է տվյալ հողամասերի սեփականության իրավունքի վկայականը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/135/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների վերլուծություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Շուշան Մամիկոնի Մքոյանի ընտանիքի անդամ Մամիկոն Մքոյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Մամիկոն Մքոյանը Հայտարարագիրը Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի մայիսի 27-ին:

3.3 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Մամիկոն Մքոյանին 2000 թվականից ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Շիրակի մարզ, Արևիկ գյուղում (համայնքում) գտնվող տնամերձ հողամասը և հացատունը (170 քմ, 40.5 քմ, 17.2 քմ), իսկ 2003 թվականից ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Շիրակի մարզ, Արևիկ գյուղում (համայնքում) գտնվող հողամասը (3600 քմ), մինչդեռ վերը նշված անշարժ գույքերը հայտարարագրված չեն Հայտարարագրի «Բ.1.1.Տվյալ տարվա սկզբում առկա Անշարժ գույք» ենթաբաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք, (...):

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույք հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ տվյալ գործի քննությունը վերաբերում է արդյոք իր իրավասությանը թե ոչ, ճիշտ են կազմվել արդյոք վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը, **գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին,** պահանջվել են արդյոք անհրաժեշտ, լրացուցիչ նյութերը և վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն սույն օրենսգրքի 169.28-րդ և 169.31-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վաչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

4.12 Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ (...) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետների անցնելը (...):

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ թեև Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Շուշան Մամիկոնի Մքոյանի ընտանիքի անդամ Մամիկոն Մքոյանը Հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հետևանքով թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ

մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ, նկատի ունենալով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին անցել են Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետները (Հայտարարագիրը ներկայացվել է 2024 թվականի մայիսի 27-ին, իսկ գործի քննությունը նշանակվել է 2025 թվականի հունիսի 2-ին), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, օրենսգրքի 37-րդ, 247-րդ և 275-րդ հոդվածներով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մամիկոն Լևոնի Մքոյանի վերաբերյալ հարուցված ՎԻՎ/135/2025 վարչական վարույթը կարճել՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության պահին Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետն անցած լինելու հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մամիկոն Լևոնի Մքոյանին այն սահմանված կարգով հանձնելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Մամիկոն Լևոնի Մքոյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ